

և չի էլ բարձրացնիլ այսուհետև։ Նա ոռւս սուինի բարեկա՞ն  
է և անկեղծ պաշտպանը—այս նա ապացուցել է շատ անգամ։  
Իսկ թուրք ամբոխն այժմ կուռմ է ոռւս զօրքերի դէմ երևա-  
նի նահանգում։ Ահա ինչումն է տարբերութիւնը։ Կարծում  
ենք, որ միայն այս տարբերութիւնը բաւական է երկու  
ազգութիւնների իսկական պատկերը լուսաբանելու համար։  
Եւ ոչ մի սուտ, լուսանք ու զրպարտութիւն չի կարող իրո-  
ղութիւնը թագցնել Ռուս Պետութիւնից...

**ՄԿՐՏԻՉ** ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ անհասանելի  
կամօրն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ կաթողիկոս ամե-  
նայն Հայոց ծայրագոյն Պատրիարք Համազգական նախա-  
մեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղե-  
տոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի Գերազնիւ պ. Կարապե-  
տի Կոստանեան, Տեսչի Հոգեւոր Ճեմարանի Մայր Աթոռոյս և հա-  
րազատի սորին Հայրապետական օրհնութեամբ յայտ առնեմք։

Բազմաժամանակեայն Զեր վաստակը և ծառայութիւնը՝  
մատուցեալք ազգիս ի կրթական ասպարիզի, ապաքէն թո-  
ղեալ են զգալի օգուտս եկեղեցւոյ մերոյ և ուսումնարանաց,  
մանաւանդ ի գլխաւոր կրթարանս մեր, այն է ի Հոգեւոր ճե-  
մարանի Մայր Վանուցս, ի Ներսիսեան Հոգեւոր Դպրանոցի, ի  
տարեգիրս որոց մնայ անջնջելի անոնն և վաստակ պ. Կ. Կոս-  
տանեանց, իբրև ուսուցչի, պաշտօնակատարի տեսչի և իբրև  
Միզօր տեսչի և որոց արժանաւորապէս և գիտակցաբար  
պաշտօնավարութեանն մեք աներկբայ զմեզ կացուցանեմք։

Յիրաւի ծանր է մեզ և զրկանք Հոգեւոր Ճեմարանի  
գրկիլ ի հմուտ զեկավարէ մեծի հաստատութեանն այնորիկ,  
ուրանօր խաղաղ և անվրդով հոլովէին շրջանք ուսումնարանա-  
կան ամաց, միաբան սիրով եւ համերաշխութեամբ ուսուցչաց  
և պաշտօնէից ընդ գլխաւորութեամբ Զեր և ցանկալի իսկ էր,  
զի ըստ առաջնոյն կայիք մնայիք ի Զերումդ պաշտաման,  
սակայն զիշեալ ի ինդիր Զեր ի թախանձանս, որ ինդրէք  
ազատ զԶեզ կացուցանել ի սիրեցեալն Զեր ասպարիզէ, Մեք  
զիշեալ ի ինդիր Զեր ցաւ ի սիրս ընդունիմք զհրաժարական  
Զեր և ազատ համարիմք ի պաշտամանէ տեսչութեան Հոգեւոր  
Ճեմարանի Մայր Աթոռոյս։ Արդ՝ որ հեռանայք ի սրբավայրէս  
եւ բաժանիք ի Մէսչ, ընկալարուք զսրտագինն մեր շնորակալիս  
հանդերձ գոհունակութեամբ ի արիտուր արդար վաստակոց  
Զերոց, արդինաւոր ջանիցն եւ հմուտ կառավարութեանն։

Փրկիչն Յիսուս, որ պարզեատուն է և վարձատրիչն

ամենայն վաստակաւորաց և արժանաւոր մշակաց, ինքնին լիցի Զեղ վարձահատուց, որ բազում ամօք տքնիցայք ի ծոց սրբավայրին հիմնադրելոյն յինքնէնէ, Օրհնիսցէ Տէր գծեղ երկնային օրհնութեամբ իւրով և պահպանեսցէ յառողջ, յաջող և յերջանիկ կենցաղ յամայր ամօք կատարեալն անդորր բութեամբ:

Եւ մեք աղօթս առնեմք կալ մնալ Զեղ այդու նախանձաւորն հոգւով առ ազգային սրբավայրս մեր և բազմադարեան աւանդութիւնս նորին, այդու անսպառ եռանդեամբ առ կրթական հաստատութիւնս, զի ի հոգուստ ևս միշտ օգտակար հանդիսաս ջիբ փառաց և բարեզարդութեանց ազգային և նուիրական հաստատութեանց մերոց բանիւ և գործով իրեւ որդի հարազատ Սրբոյ Աթոռոյու Ամէն:

Իվերայ իսկականին ստորագրեալ է Մ. Կ. Ա. Հայոց ի 21-ն Մայիսի 1905 ամի

և ըստ Տոմարիս Ո-ՑԵԴ:

Ի Հայրապետութեան մերում ԺԲ. ամի  
յԱրարատեան Մ. Աթոռ Ս. Էջմիածնի

ի Վաղարշապատ

Թ. 458

— Նորին Ս. Օծութիւն Ազգիս Վեհ. Հայրապետը Մայր Աթոռից Թիֆլիս ժամանեց յունիսի 23-ի երեկ. 5 ժամին. և նոյն ամսի 25-ի կէսօրուայ 2½, ժամին այցելեց Կովկասի պայծառափայլ Փոխարքային:

Վեհափառի պալատ գնալը կատարուեց առանձին հանդիսով. կոմս փոխարքան ուղարկել էր վեհարանից Հայրապետին ուղեկցելու 30 կօղակ, որոնց առջեկց երեք կօղակ կրումէին դրօշակը, Վեհին սինչև պալատ ուղեկցում էր իւր շքախումքը: Կոմսը արժանավայել յարգութեամբ ընդունեց վեհին, որ և իւր Հայրապետական ողջունի և օրհնութեան հետ՝ ներկայացրեց նորան Հայ ազգի ներկայ իղձերը: Կոմսը յուսագրեց Հայրապետին, որ շուտով պէտք է իրականանայ ազգի ցանկութիւնը Հայ եկեղեցական կալուածների և մեր ուսումնարանների վերաբերութեամբ: Վեհ. Հայրապետը օրհնեց նաև կոմսունուն, որ պատուասիրեց նորին սրբութեան սուրճով և 35 ըոպէի տեսակցութիւնից յետոյ նոյն շրով վերագարձաւ վեհարան:

Կէս ժամ չանցած կոմսը իւր ամուսնու հետ փոխայցելութիւն եկաւ վեհին, ուր ընդունուեցաւ ամենայն պատուով:

Մի քանի օրից յետոյ, ինչպէս մենք լսում ենք, վեհ. Հայրապետը ներկայացրել է Տ. փոխարքային իւր ինդիրների գրաւոր ամփոփումը:

Ասում են, որ Կովկասեան փոխարքայի օքնական Սուլթան Կրիմ-Գիրէյը, Վեհ. Հայրապետին այցելած ժամանակ, յուսա-

դրել է նորին Օծութեան, որ մեր կալուածները կվերալարձուին և ուսումնարանները կվերաբացուին սինչև առաջիկայ սեպտեմբեր և Վեհը խնդրել է փութացնել այդ մասին ժողով կազմել, ուր ինքը կուղարկէ իւր լիազօրները և կներկայացնէ կարսոր թղթերը այդ խնդիրների նկատմամբ:

— Անցեալ յունիսի 17-ին, ս. Գրիգոր Լուսաւորչի վիրապից դուրս զայռու տօնի օրը Ազգիս ծերունազարդ Հայրապետ Տ. Տ. Մկրտիչ Ա. և եպիսկոպոսական աստիճանի վերակոչեց նորերս ս. Խաչ վանքից վերադարձած Տ. Նահապետ և Արցախի թեմի նորահաստատ առաջնորդ Տ. Աշոտ վարդապետներին: Նորընծայ Տ. Նահապետ եպիսկոպոսը, Մայր Աթոռի այժմեան ճեմարանական վարդապետների հայրը, անդրանիկ ս. պատարագ յատուցանելով իջման սեղանում, Վեհ. շրախմբի հետ ժամանեց Թիֆլիս, իսկ Տ. Աշոտ եպիսկոպոսը մի շաբաթ յետոյ ուղեռուեցաւ Ս. Էջմիածնից և այժմս գտնուում է Թիֆլիս, ուր հոգում է իւր թեմի մի քանի խիստ կարսոր խնդիրների բարեյաջող լուծումն ստանալ և ապա ուղեռուել Շուշի:

— Տարի ու կէսուայ ակամայ դաղարումից յետոյ՝ ամսոյն 3-ին, կիւրակի օրը, լոյս տեսաւ Շնոր-Դարիշներկայ տարուայ առաջին համարը մեծացրած դիրքով և ճոխի բովանդակութեամբ: Խմբագրութիւնը յայտնում է, որ կանոնաւոր բաժանորդագրութիւն ընդունում է առաջիկայ սեպտ. 1-ից և այդ ժամանակից կսկսուի Շնոր-Դարը կանոնաւոր, շաբաթը վեց անգամ, հրատարակուիլ:

Թէ որ աստիճան ժողովուրդը ծարաւի է մի օրինաւոր, բուն հայ ամենօրեայ թերթի, կարելի է դատել նորանով, որ Շնոր-Դարիշ այդ № 1-ի 2500 տպուած օրինակները, հատի տակ ծախելով, բուրու սպասուեցան նոյն իսկ կիւրակի օրը և երկուշաբթի Խմբագրութիւնը ստիպուած եղաւ նոյն համարը երկրորդ տպագրութեամբ տպել գարձեալ 2000 օրինակ:

### ՆԱՄԱԿ ԳԱՆԶԱԿԻՑ

6 Յունիսի 1905

Գրելու շատ բան կայ, բայց որը գրեմ, որը թողնեմ, Երբ Նախիշնանի դէպքերը տեղի ունեցան, այստեղ սագերը գրգռուեցան. այդ յայտնի բան էր և մենք զէտք է սպասէինք. մի քանի օր մարդիկ մի տեսակ շուարուած գրութեան մէջ էին, չէին իմանում ինչ է կատարուում. յետոյ մի փոքր սթափուեցան ու սկսան քարոզների ետևից ընկնել. թուրքերին քարոզում ու յորդորում էին միանալ, բարեկամանալ մեզ հետ և վերջապէս ճանաչել թշնամուն և բարեկամին: Բագուայ սարսափելի դէպքերի առիթով արդէն հայերը հաւաքուել էին (փետրուար ամսին) թուրքաց գլխաւոր մզկիթը, իսկ թուրքերը եկան հայոց Ս. Լուսաւորիչ եկեղեցին, հոգեհանգիստներ կատարեցին, խօսեցին, համոզեցին իրար, որ մենք իրար հետ համերաշխ կերպով ու բարեկամաբար ապրելուց բացի օգուար ոչ մի-